

## ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

---

- ✓ 2015թ. նոյեմբերի 1-ից դեկտեմբերի 11-ը ՀՀ ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի առաջատար մասնագետ Մ. Խաչատրյանը, նույն բաժնի առաջին կարգի մասնագետ Ս. Մովսիսյանը և երկրորդ կարգի մասնագետ Ա. Տոնապետյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ազգային հաշիվների համակարգ» խորագրով միջին մակարդակի 6-րդ էլեկտրոնային առցանց դասընթացին,
- ✓ 2015թ. նոյեմբերի 5-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Դեպի Փարիզ՝ Հայաստանը Կլիմայի փոփոխության կոնվենցիայի Կողմերի 21-րդ նստաշրջանի նախաշեմին» խորագրով կոնֆերանսին,
- ✓ 2015թ. նոյեմբերի 6-ին ՀՀ ԱՎԾ արդյունաբերության վիճակագրության բաժնի երկրորդ կարգի մասնագետ Ա. Գրբոյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Հայաստանի երկամյա առաջընթացի առաջին զեկույցի Ջերմոցային գազերի կադաստրի արդյունքների և մեղմման գործողությունների արդյունքում ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման գնահատումների ներկայացման համար աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2015թ. նոյեմբերի 13-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Նախագծերի կառավարման միջազգային օրվա աշխատաժողով՝ Հայաստանի հետ 10-ամյա համագործակցությունը նշանավորող միջոցառմանը,
- ✓ 2015թ. նոյեմբերի 13-ին ՀՀ ԱՎԾ վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Դեպի ծով ելք չունեցող զարգացող երկրների (LLDCs) վերաբերյալ Վիեննայի 2014-2024թթ. գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման Հայաստանի Հանրապետության ազգային ծրագրի մշակման կազմակերպչական աշխատանքների իրականացումն ապահովելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի հանդիպմանը,
- ✓ 2015թ. նոյեմբերի 16-ին ՀՀ ԱՎԾ թվով 15 աշխատակից մասնակցել են ք. Երևանում կայացած «Ըստ սեռերի վիճակագրության սպառողները Հայաստանում» խորագրով սեմինարին,

- ✓ 2015թ. նոյեմբերի 17-ին ՀՀ ԱՎԾ թվով 15 աշխատակից մասնակցել են ք. Երևանում կայացած «Ըստ սեռերի վիճակագրության սպառողները Հայաստանում» խորագրով սեմինարին,
- ✓ 2015թ. նոյեմբերի 25-ին ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Օտարերկրյա ներդրումների վերաբերյալ վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության գործընթացի պարզաբանման նպատակով կազմակերպված աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2015թ. նոյեմբերի 26-ին ՀՀ ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Համաշխարհային և տարածաշրջանային վերջին ցնցումների համատեքստում Հայաստանի քաղաքականության մարդահրավերները» խորագրով զեկույցի քննարկմանը,
- ✓ 2015թ. նոյեմբերի 27-ին ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ԱՊՀ մասնակից պետությունների բնակչության աշխատանքի, միգրացիայի և սոցիալական պաշտպանության խորհրդակցական խորհրդի հերթական 28-րդ նիստին,
- ✓ 2015թ. նոյեմբերի 27-ին ՀՀ ԱՎԾ թվով 32 աշխատակից մասնակցել են ք. Երևանում կայացած «ՀՀ 2014թ. գյուղատնտեսական համատարած հաշվառում» սեմինար խորհրդակցությանը,
- ✓ 2015թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Գյուղատնտեսության ոլորտում հետադետալին ազդեցության և կարիքների գնահատման մեթոդաբանություն» թեմայով քննարկմանը,
- ✓ 2015թ. դեկտեմբերի 8-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Ա. Հակոբյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում» խորագրով աշխատանքային քննարկմանը,
- ✓ 2015թ. դեկտեմբերի 9-10-ը ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը և մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների առաջին կարգի մասնագետ Ս. Մովսիսյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ԵԱՏՄ անդամ պետությունների տնտեսական զարգացման կացությունը սահմանող մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկման մեթոդա-

բանության կատարելագործման վերաբերյալ աշխատանքային խմբի 8-րդ նիստին,

- ✓ 2015թ. դեկտեմբերի 12-13-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Աղվերանում կայացած «Աջակցություն Հայաստանում շրջանակաձև միգրացիայի և վերահսկողության գործընթացին» ծրագրի շրջանակներում «ՀՀ միգրացիոն վիճակագրությունը 2014-2015թթ.» խորագրով լրագրողական սեմինարին,
- ✓ 2015թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՓՄՁ ոլորտի վիճակագրական վերլուծության նոր մեթոդաբանություն» թեմայով ազգային աշխատաժողովին,
- ✓ 2015թ. դեկտեմբերի 15-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Անանյանը և ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն» նախագծի մեկնարկին,
- ✓ 2015թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ ԱՎԾ սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում» ծրագրի շրջանակներում ձևավորված «Անչափահասների արդարադատության» խորհրդի առաջին նիստին,
- ✓ 2015թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Եվրոպական հանձնաժողովի Մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության կողմից ֆինանսավորվող Աղետների ռիսկերի կառավարման տարածաշրջանային ծրագրի հայաստանյան բաղադրիչի (ԴԻՊԵԿՈ) «Առն գործողությունների կայունության ապահովում» ծրագրի ամփոփիչ համաժողովին,
- ✓ 2015թ. դեկտեմբերի 24-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանի Հանրապետությունում հարկադիր աշխատանքի և մարդկանց թրաֆիքինգի փորձնական որակական հետազոտության» արդյունքների շնորհանդեսին:

- ✓ 2015թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում տեսակոնֆերանսի միջոցով կայացած «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու շրջանակներում ՀՀ-ը տեխնիկական և ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին» համաձայնագրի նպատակների իրագործման նկատմամբ հսկողության և ՀՀ գործադիր իշխանության մարմինների փոխգործակցությունը համակարգելու նպատակով ստեղծված հատուկ աշխատանքային խմբի հանդիպմանը: